ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 171 -Ա
25 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2021Թ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՀՈՎԻՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ԱՆԱՀԻՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածի, 218-րդ հոդվածի 1-ին մասի, 220-րդ հոդվածի 1-ին մասի, 222-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 224-րդ և 226-րդ հոդվածների, 227-րդ հոդվածի 1-ին մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայայստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վարդահովիտի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 48-րդ կետի 12-րդ և 21-րդ ենթակետերը, պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի հետ 2017 թվականի փետրվարի 6-ին կնքված թիվ 360 պայմանագրի 2.2-րդ կետի «դ» ենթակետը և հաշվի առնելով Ա. Մարգարյանի 15.10.2021թ. բացատրությունը, մարզպետի 2021 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 167-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի կողմից կազմված արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ուսումնական հաստատության կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունները ոչ պատշաճ կատարելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 1442-Ն որոշմամբ տեղափոխված սեպտեմբերի 25-ի աշխատանքային օրը դպրոցի աշխատանքները դադարեցնելու համար «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վարդահովիտի հիմնական դպրոց»

ՊՈԱԿ-ի տնօրեն Անահիտ Մարգարյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ կիրառելով «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

2. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ ապահովել սույն որոշման մեկ օրինակը երեք օրվա ընթացքում Ա. Մարգարյանին ծանուցելու գործընթացը:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում սահմանված կարգով Ա. Մարգարյանին ծանուցելու պահից:

10/25/2021

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

բ. Եղեգնաձոր